

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

«Այր ի հաւատով եւ Հոգւով Սրբով»
(Գ. Առաք. 2. 5)

Գործք Առաքելոցին անանուն հեղինակը, որ շատ հաւանաբար երբորդ Աւետարանին հեղինակն է, գեղեցիկ և վճիռ կերպով բարացուցած է Ս. Ստեփանոսի նկարագիրը «այր լի հաւատով և Հոգւով Սրբով»: Աւագ Տօներէն երկրորդն է Ս. Ստեփանոսի տօնը: Ան «նախասարկաւագ», «նախաժկայ», «առաքեալ», «առաջին մարտիրոս» կը յորջորջուի, և նախնական Գլխատնէական Եկեղեցւոյ փառապանծ դէմքերէն մին եղած է և որ առաջինը եօթանց խումբին, որոնք ապա Սարկաւագ անունը ստացան, որ Եկեղեցւոյ մէջ ծառայող և կամ սպասուորող կը նշանակէ: «Եօթանց» խումբին ընտրութեան զլիսաւոր պատճառը և շարժառիթը եղած էր, երուսաղէմի մէջ ամենօրեայ հացի բաշխումին մէջ (դրամ կամ սնունդ) հեղինակս աշխարհաբան անտէր մնալին, ինչպէս որ կը կարգանք «զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդի աշխրք նոցա»: Այսինքն՝ հեղինակս հրեաներու աշխարհաբան ամենօրեայ ողորմութեան մէջ կ'անտեսուէին (Գ. Առաք. 2. 1 և շար.):

հետեւաբար, սխալած կ'ըլլանք երբ աղօթենք, «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

Պէտք է սորվինք այս հայցուածով, նախ՝ հաւատք, երկրորդ՝ վստահութիւն, երրորդ՝ գոհունակութիւն, չորրորդ՝ չափաւորութիւն, հինգերորդ՝ աշխատասիրութիւն, և վեցերորդ՝ իրերօգնութիւն:

Ուրեմն, Տէրունական Աղօթքին մեզ վերաբերող այս հայցուածը, որ մարդկային հայցուածներուն առաջինն է, մեր կարծածէն շատ աւելի ընդարձակ և խորունկ նշանակութիւն ունի թէ՛ հոգեւորապէս, թէ՛ մարմնաւորապէս: Այս գիտակցութեամբ աղօթենք, — «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

ԳՐ. ՍՐԿ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ
(Նառնակեղի՝ 13)

Երկոտառան առաքեալները ի տես այս կացութեան, աշակերտներու և հետեւողներու խումբը կանչեցին, ինչ որ բաւական մեծցած էր, առաքելական քարոզութեանց շնորհիւ և հանապազորեայ բաշխումի հարցը եւ կատարուած անկանոնութիւնները հարթելու համար, առաջարկեցին որ եօթը անձերէ բաղկացած մարմին մը ընտրուի, «զորս կացուցուք ի վերայ պիտոյիցս այսօրիկ», իսկ իրենք ալ ազատ ըլլան «աղօթքով և պաշտամունքով զբաղելու «աղօթից և պաշտաման բանին հպատակ լիցուք»: Թէ՛ ինչո՞ւ համար եօթը անձեր ընտրուեցան, այդ մասին որոշ բան մը չենք գիտեր, բայց շատ հաւանական է որ, եօթը զլիսաւոր ճիւղերու բաժնուած ըլլալ այդ գործին մատակարարութիւնը:

«Եօթանց» այս խումբը, առաքեալներէն ձեռնադրութիւն ալ ստացան, «եղին ի վերայ նոցա զձեռս», և իրենց գործունէութեան սկսան:

Ս. Ստեփանոս, «Եօթանց» այս խումբին զլիսաւոր առաջնորդն էր. իսկ իր վեց միւս ընկերներն էին. 1. Փիլիպպոս, 2. Պրօքորոն, 3. Նիկանորա, 4. Տիմոթէա, 5. Պարմենա, 6. Նիկողայոս Անտիօքացին: Աւանդութեան մը համաձայն, Ստեփանոսն ալ, այսինքն Ս. Ստեփանոս և իրեն զասակից վեց ընկերները, Սիոնի լեռան վերնատան մէջ՝ ուր Ս. Հոգին իջաւ առաքելոց վրան, սարկաւագ ձեռնադրուեցան առաքեալներէն:

Պաղեստին, այդ ժամանակ, հռոմէական պետութեան գերիշխանութեան ներքեւ կը գտնուէր: Սակայն և այնպէս, հրեաները Պաղեստինի մէջ կարգ մը առանձնաշնորհութիւններ կը վայելէին: Պաղեստինաբնակ հրեաները երկու զլիսաւոր խումբերու բաժնուած էին: Պաղեստինցի, արամերէն խօսող հրեաներ: Արտաքոյ Պաղեստինի, հեթանոսութենէ ի հրէութիւն դարձող հրեաներ, որոնք յունարէն կը խօսէին և մեծամասնութիւն կը կազմէին: Պաղեստինի զլիսաւոր քաղաքներուն մէջ, մանաւանդ Երուսաղէմի մէջ, հրեայ ժողովարաններ (Սինակոկ) կային, ուր՝ Ս. Գիրքը յունարէն լեզուով կը կարդացուէր, այս իսկ պատճառաւ յունարէնը եթէ ոչ տիրապետող, գոնէ մրցող լեզու մըն էր արամերէնին հետ:

Այս «Եօթանց» ընտրութեամբը, որուն մէջ Ս. Ստեփանոս ազգեցիկ ղիրք և հեղինակութիւն ունէր, իրրեւ քարոզիչ, կազմակերպիչ և հրաշագործ մանաւանդ, տիրական հեղինակութիւն մը ունեցաւ: Եւրուսաղէմի նորահաստատ Եկեղեցին իր ունեցած ներքին վարչականով, սկսաւ զօրանալ, աճիլ, զարգանալ, ո՛չ միայն ռամիկ ժողովուրդը անոր քարոզութենէն և հաւատքի զօրութենէն ու անոր խորունկ ներշնչումէն ազդուելով Քրիստոնէութեան գիրկը կուգար, այլ բազում քահանաներ, «բազումք ժողովք քահանայիցն անսային հաւատոցն»: Ս. Ստեփանոսի մասին չենք գիտեր թէ երբ Քրիստոնէութիւնը ընդունեց, որոշ է սակայն իր հելլենախօս հրեայ մը ըլլալը, ինչպէս իր անունէն ալ կը մակարերուի: Եկեղեցւոյ հայրերէն, Ս. Եպիփան կ'ըսէ թէ, Ս. Ստեփանոս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընտրած 72 աշակերտներէն մին էր, սակայն և այնպէս որոշ տուեալներ և փաստեր չունինք այս վկայութեան ճշտութեան մասին: Ս. Ստեփանոս գերազանցապէս հաւատքի, Աստուածգլխութեան մարդն էր, և աստուածային շնորհները կը փայլեցնէր իր անձին վրայ: Հելլէն բարձրաթիւ հմտքը եւ հրէական կրօնական միսթիք հոգին կերտեցին և բարձրացուցին Ս. Ստեփանոսի անձը, բազմազան Աստուածային շնորհներով, կրօնական երկիւղածութեամբ եւ իմաստութեամբ եւ հոգեկան անընկճելի զօրութիւններով: Ան՝ կայծ մը ունէր Մովսէս Աստուածատես մարգարէէն. եւ ժառանգած էր Երրայեցի մարգարէներու և տեսանողներու հոգեկան ուժը:

Ս. Ստեփանոս, իր բարձր ոգիով հըրաշքներ կը գործէր ժողովուրդին մէջ, և օր ըստ օրէ իր մասին ժողովրդական համակրութիւնը և սքանչացումը կը շատնար, իր առաքելական գործունէութիւնը եւ կատարած գործին համբաւը օրուան մարդը պիտի դարձնէին ղինքը:

Երուսաղէմի մէջ, կարգ մը նախանձոտ անձեր, որոնք «Լիբէացւոց», «Կիւրենացւոց», «Աղեքսանդրացւոց» և «Կիլիկեացւոց» ժողովարաններէն էին, չէին քաշեր ղինքը, չէին սիրեր, կը նախանձէին իր ունեցած ժողովրդական համբաւին, և անընդհատ կը վիճէին հետը:

Այս նախանձոտ և քսու անձերը, որոնց անունները չենք գիտեր, սակայն անոնց մէջ շատ հաւանաբար Սողոմն ալ կար, սկսան ծուռ, սխալ և մուլար միջոցներով հետապնդել և նեղել ղինքը: Անոնք կարգ մը մարդիկ կաշառեցին եւ անոնց ըսել տուին թէ՝ մենք իրմէն հայհոյանքներ եւ լուտանքներ լսեցինք Մովսէսի և Աստուծոյ դէմ: Ուխտեալ այն հակառակորդները, առիթը ներկայանալուն պէս, ժողովրդային ղիրահաւանութիւնը զրգուելով զայն բռնեցին և տարին Սենեդրիոն: Հոն, հրէից մեծագոյն ատեանը միայն իրաւունք և իրաւասութիւն ունէր, ո՛չ միայն դատելու օրէնքի սահմանին մէջ, այլ նաեւ դատապարտելու և մահուան վճիռ արձակելու, նամանաւանդ օր՝ Ս. Ստեփանոս կը ներկայանար իրրեւ ծանր ամբաստանեալ, իրրեւ հայհոյիչ Մովսէսի և Աստուծոյ:

Հրէական Գերագոյն Ատեանին մէջ, կաշառուած սուտ և վարձկան վկաները, Ս. Ստեփանոսին դէմ իրենց օրինական ամբաստանութիւնները կատարեցին և ըսին Քահանայապետին և Սենեդրիոնի 72 անդամներուն «այս այս ոչ դադարէ խօսիլ բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ և զօրինացն»:

Սենեդրիոնի անդամները, հրեայ օրէնսդէտներ, կրօնականներ, կրօնական առաջնորդներ, քահանայապետները, ղպիրները, օրինաց վարդապետները և ծեր ու աղեղարդ իշխանները և տարուան քահանայապետը, երբ Ս. Ստեփանոսի դէմքին նայեցան, զմայլեցան և յափշտակուեցան. ան՝ հրեշտակային տեսիլք և անմեղութեան շող մը ունէր իր դէմքին վրայ: Եւ ահա օրուան Քահանայապետը կը սկսի իր հարցաքննութեան և կ'ըսէ Ս. Ստեփանոսին. «Եթէ արդարեւ այդ այդպէս իցէ»:

Ո՛վ Ստեփանոս, այս բոլոր ըսուածները, ամբաստանութիւնները ճիշդ են արդեօք: Ս. Ստեփանոս, ատեանին առջև կրակոտ, խիստ և երկար ճառ մը կը խօսի, որուն մէջ Երրայեցւոց անցեալ պատմութիւնը կը պատմէ իմաստասիրութեամբ և վերլուծութեամբ «Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում Աբրահամում» կ'ըսէ և այնպէս յաջորդաբար պատմական մեծ դէմքերը կը վերլիչէ, ինչպէս Աբրահամ, Յովսէփ, Մովսէս, Դաւիթ և ուրիշներ:

Ս. Ստեփանոսի ճառին մէջ կան հետեւեալ կէտերը: 1. Աստուծոյ յարաբերութիւնը իր ուխտեալ ժողովուրդին հետ: 2. Ս. Գիրքը ցոյց կուտայ թէ, Իսրայէլը սկիզբէն ի վեր միշտ դէմ կեցած է Աստուծոյ պաշտօնեաներուն: 3. Աստուծոյ ուխտը կը կանխէ Օրէնքը և անկէ անկախ է: 4. Աստուծոյ կողմէն զրկուած բոլոր մարգարէները, միշտ ժողովրդեան կողմէն հալածանքի ենթարկուած են: Ս. Ստեփանոս իր հոյակապ ճառովը, հրեղէն լեզու եղած է կարծես, Սենեգրիոնի անդամներուն հոգիները այրող: Ս. Ստեփանոս, հաւատքի և տեսիլքի մեծ մարդը, իր ճառին վերջաւորութեան, ատենանին մէջ դառնուողները խիստ և բուռն բառերով կը յանդիմանէ և անոնց բոլորին ուղղելով իր հատու խօսքերը կ'ըսէ անոնց «ո՛վ խտապարանոցներ և սրտով ու ականջով չթլփատուածներ, դուք միշտ Ս. Հոգւոյն (ճշմարտութեան) հակառակ կը կենաք, ինչպէս ձեր հայրերը, այնպէս ալ դուք»:

Այս խիստ յանդիմանական ու յարձակողական խօսքերուն վրայ, քահանայապետը և Սենեգրիոնին անդամները սկսան զայրանալ ու յուզումէն իրենց ականները կը կրճտէին «կրճէին զատամուշս ի վերայ նորա»: Ս. Ստեփանոս, այդ պահուն հոգիացած ու վերացած, ամէն բան աչք առած էր արդէն և հոն խռնուած բազմութեան մէջ կ'ազաղակէ և կ'ըսէ. «Ահա՛, կը տեսնեմ, երկինքը բացուած, ու Մարգու Որդին, Աստուծոյ աջ կողմը նստած»:

Հրեայ ամբոխը մոլեգին և կատաղած, ալ չի կրնար համբերել. չի կրնար սանձել իր զայրոյթը, և բոլորը մէկ՝ իրեն վրայ յարձակեցան, քաղաքէն դուրս հանեցին և քարկոծեցին զայն:

Քարկոծումը հրէից մէջ, սովորական պատիժ մըն էր և ըստ օրինի պէտք էր զործադրուէր երկու կամ երեք վկաներով, և ոչ թէ մէկ վկայով միայն. «Երկուք և երեք վկայիւք մեոցի որ մեռանիցին և մի՛ մեոցի միով վկայիւ»: Ս. Ստեփանոսի վերջին խօսքերը կ'ըլլան. «Տէր Յիսուս ընկալ զոգի իմ», և ան քարերու տարափին տակ ծունկի կուգայ և կ'ազաղակէ. «Տէր, մի համարեր նոցա զայս մեզս», ու կ'աւանդէ իր հոգին առ Աստուած: Սուղոս, ըստ Գործք Առաքելոցի՝ «էր կամակից սպանման նորա»:

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ այն ամենուն որ ըսինք գալիք կեանքի մասին, արդի մարդոց անհոգութեանը շուրջ, անմահութեան կարելիութիւնը անոնցմէ շատերուն համար աւելի խնդրական է քան անոր նշանակութիւնը: Անոնք կրնայ ըլլալ որ հետեւած չըլլան ոչնչացման նշանակութեանը իր բոլոր կցորդութիւններով, բայց բնագոյնը զգացած են տարբերութիւնը որ կայ անձնական յոյսի համար գալիք կեանքը հաստատելու կամ ուրանալու մէջ: Անոնք մըտածելով նոյնիսկ իրենց մահուան վրայ կամ ուրիշներու կորուստին մէջ զրկանքի հանդուրժելով, իրենց անտարբեր դիրքը հալած գտած են կսկիծի մէջ ու յոյսի համար անչէջ քաղձանքի խորը, և երբ ի յաւելումն այս բնական հակազդեցութեան, ի ներկայութեան մահուան, կը տեսնեն ազդեցութիւնը կեանքի հա-

Ս. Ստեփանոս, այսկերպ անթառամ պսակին արժանացաւ, իր սուրբ արիւնովը մկրտուեցաւ ի սէր Քրիստոսի, ի սէր ճշմարտութեան և ի սէր իր սուրբ հաւատքին:

Ս. Ստեփանոսի տօնը՝ տօնն է բոլոր զպրոցականներուն, զպիւրներուն, աշակերտութեան և ուսանողութեան: Իսկ, Սուրբ Երուսաղէմի մէջ, տօնն է իրեն գասակից Սարկաւազներուն:

Հին աւանդութիւնը Ս. Ստեփանոսը կը ներկայացնէ սպիտակ պատմութեանով, փայլուն և կարմիր զգեստով, մոմ և բուրմառ ի ձեռին: Սպիտակ պատմութեանը խորհրդանշանն է իր անմեղութեան, անբռնութեան: Կարմիր զգեստը իր արիւնը կը ներկայացնէ որ տուաւ Եկեղեցւոյ համար: Մոմը՝ խորհրդանշանն է լոյսին, զիտութեան և ճշմարտութեան: Իսկ բուրմառը՝ խորհուրդն է իր աղօթքին, որ կը բարձրանայ առ Աստուած: Ս. Ստեփանոս, պըսակ մը եղաւ իր անունովը, պսակուեցաւ մեր Տիրոջ կողմէն և փառաւորուեցաւ երկնային անթառամ պսակով...

ՊԱՐԿԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ